Վերադառնալ (/)

No.	21710
Բանալի	0
Էլ. փոստ	armen1375@yandex.ru
Դիմումի ամսաթիվ	2020-08-30
Տեսակ	Ֆիզիկական անձ
Անուն ազգանուն	Արմեն Լուսինյան
Հասցե	Ք. Երևան 0033, Կոմիտաս 8 բն. 26
Հեռախոս	096979734
Անձնագիր	012538310
Բովանդակություն	30.08.2020 ք. Երևան Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին ՀՀ քաղաքացի Արմեն Աբրահամի Լուսինյանից Հաշվառման հասցե՝ ք. Շուշի, Ա. Մանուկյան փ. շ. 1, բն. 41 Բնակության և Ծանուցման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 8 շ, բն. 26, 0033 ԻՐԱՉԵԿՈՒՄ Հանրային հավաքի անցմացման մասին Հարգելի՛ պարոն Մարության Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ և հավաքի ղեկավար: Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկությունը. 1. Հավաքի վայրը՝ Երևան, Ազատության հրապարակ 2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2020 թ. սեպտեմբերի 29-ը , ժամը 17:00-23:00: 3. Հավաքի նպատակը՝ Հայաստանի ներքաղաքական հարցերի քննարկում 4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ 1000, պահպանելով համավարաքի հետ կապված բոլոր օրինական պահանջները: 5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ դրոշներ, պաստառներ, վրաններ, պլաստիկե սեղաններ և աթոռներ, հովանոցներ, բարձրախոսներ, ձայնի ուժեղարարներ, էլեկտրասնուցման համար անհրաժեշտ մալուխ և այլ տեխնիկական սարքեր: 6. Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ 10 մարդ: 7. Հավաքի ընթացքում (ժամը 20:00-23:00) նախատեսվում է երթ՝ Ազատության հրապարակ- Մաշտոցի պողոտա-Կորյունի փողոց-Նալբանդյան փողոց- Հանրապետության հրապարակ- Ամիրյան փողոց-Մաշտոցի պողոտա-Ազատության հրապարակ երթուղով: 8. Կազմակերպչի (հավաքի ղեկավարի) տվյալները՝ Ազգանուն, անուն, հայրանուն՝ Արմեն Աբրահամի Լուսինյան, Նույնականացման քարտ՝012538310, տրված 03.02. 2020, 001-ի կողմից Հեռախոս՝ 096979734 Փոստային հասցե՝ 0033 Երևան, Կոմիտաս 8 շ., բն. 26 Էլեկտրոնային հասցե՝ armen1375@yandex.ru: Վերոգրյալի հաշվառմամբ խնդրում եմ՝ 1. Օրենքի սահմաններում ապահովել նշված հավաքին մասնակցողների իրավունքների լիարժեք իրացումը 2. Սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտերի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով: Առդիր՝ հավաքի կազմակերպչի նույնականացման քարտի լուսապատճենը՝ 1 թերթ: Հարգանքով՝ հավաքի կազմակերպիչ (հավաքի զեկավար) Արմեն Լուսինյան
Ֆայլեր	Ֆայլ0 (http://arcanc.yerevan.am/uploads/main/phpy7LYe2118503218_1048205468936076_6479666687398413172_n_2_.jpg)
	Ուղարկել նամակ
Կատարված	

1854123

«248» 31.08.20թ.